

ՄՏԵՓԱՆ ՔՀ. ԹՕԽԱՏԵՑԻ.— Ծ. 15 Օգոստ. 1558 ին. հօրը անուան էր Սարգիս և մօրը ճանն վաչա, ունէր երկու քոյր Յուսիանն և Էմիլն և կրտսեր եղբայր մը *skr* Յակոբ, որ իրեն աշակերտած եւ 1601 ին վաղամեռիկ եղած է: Ստեփանն աշակերտան էր Պետրոս արքեպս.ի՝ որմէ քհ. կը ձեռնադրուի 1580 ին. ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը 1589 ին եւ ընտանեօք միջնախի եղած է, այս պարագան կը հաստատէ հետեւեալ յիշատակարանը. «Տէր Ստեփաննոսն ծնաւ թվին Ռէ (= 1558) Օգոստոսի ժե. թվին ՌիՉ (= 1577) կ'ամուսնանայ Յուստիաննէ անունն աղջկան մը հետ. թվին ՌիԹ երէց եղաւ (= 1580). ՌԼԸ (= 1589) յերուսողէմ գնաց» (Հա. 1921. էջ 149): 1602 ին կը գտնուի Թօխատ, ուր սեւ եազքճիներէ կը կրէ մեծ նեղութիւններ, 1603 ին հալածանքներէ կը փախչի Պոլիս ուր ի դուռն Ս. Նիկողայոսի կ'աւարտէ իր եղբօր տէր Յակոբի կիսաաձգած Շարակնոցը, 1604—5 ին Ղրիմի մէջ կը պարագի ուսուցչութեամբ. 1608 ին Կաֆայի մէջ կ'ընդօրինակէ Սեբաստիոյ Ս. Նշան վանքին Թ. Տ2 ձեռագիրը, 1614 ին Ղրիմի Ս. Խաչ վանքը կը գտնուի: Կաֆայի մէջ գրած է երկու Տաղարան, նաև Գոլասանոքիան մը Կաֆայի ֆահանայի վրայ, որուն մէջ կը յիշէ թէ օրինակած է նաև Յայսևաուրի մը. 1608—1621 ին ալ Պասարաղի Մեկնոքիան մը, 1621 ին կը վերադառնայ Թօխատ ուր կը շարունակէ ընդօրինակել Պասարաղի Մեկնոքիանը. հաւանաբար վախճանած է 63 տարեկան: Ասոր աշակերտներէն յանուանէ կը յիշուի Յովսէփ սարկաւազ մը (Հա. 1921, էջ 146—158):

ՄՏԵՓԱՆՈՍ ՔՀ. ԼԵՀԱՅԻ.— Կը յիշուի 1603 ին Լոյկ ընդօրինակուած Յայսևաուրի մը յիշատակարանին մէջ. «Ի թվին հայոց ՌԿԴ (= 1615) ես անարժան (ծածկագրութեամբ է անունը. բայց յետոյ մատիտով վրան գրուած. «Ես եմ մեղաւոր և պաշտաւոր քահանայն Ստեփաննոս). եկա յԵրուսաղեմայ յԻրոյնոյնմբերի իբ. օրն Դշ. ի հարպետութեան *skr* Գրիգորի Տեղացւոյն, ի *skr* Ղազար (— ձեռագրիս գրչին) վարդապետի ժամանակին...»: (Տաշ. Յուգ. էջ 902):

ՄՐԱՊԻՈՆ ԵՊՍ. ԲԱԲԵՐԴՅԻ.— Իր աշակերտը Գրիգոր վրդ. Դարանաղցին կը գրէ. «... երկու անգամ յերուսողէմ գնաց և խիստ կարի առաւել սաղմոսասաց և ծունր դնող հեզ և խո-